№ 75 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ԱՊՐԻԼԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ԱՊՐԻԼԻ № 75

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿՕՆԵԱԿ „ԱՐԳՕ" ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
կ. 330. 10—2

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Ապրիլի 1-ից մինչեւ տարվայ վերջը 8 ռուբլի։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս ապրող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ДЕШЕВО
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ №7.
(կ.ե.հ.) առ. 283. 50—8

ԱՒԱԳ ԱՍՐԻԵԱՆ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԸ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն անձերին, որոնք թէ անձամբ և թէ հեռագիրներով ու նամակներով յարգել են իր հանգուցեալ կնոջ՝
ՆԻՆԱ ԱՐՏԷՄԻԵՎՆԱ
ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ
ՅԻՇԱՏԱԿԸ։ 363. 1—1

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւնների
Ընդունելութիւնը ամեն օր (ցերեկվայ ժամը 12—1.
(երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկի փողոցից՝ № 44 տան անկիւն։
(ա. օ.) առ. 343. 100—3

ՄԻԱՅՆ,
շնորհիւ ծխախոտի կատարելագործված մեխանիկական մշակման եւ ուշադիր դասաւորման,
կարելի է դարձնել տալ յատկութեամբ այնպիսի բարձր պապիրօս, ինչպիսին է
1882 р. 1896 р.
„ԿԱԼԻԱՆԸ"
10 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.
Ա. Ն. ԲՕՂԴԱՆՕՎ եւ Կօմպ. ԸՆԿ.
Մեր պապիրօսների ահռելի չափով ունեցած աջողութիւնը առաջացրել է ԲԱԶՄԱԹԻՒ ԿԵՂԾԻՔՆԵՐ։
ԶԳՈՒՇԱՑԷՔ!
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՍՏԵՓԱՆ ՆԻԿԻՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ
ԹԻՖԼԻՍ, ԲԷԲՈՒՏՕՎՍԿԱՅԱ, 37.
(մ. 5) առ. 345. 2—1

Կիրակի, ապրիլի 17-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳՈՒՄ Միքայէլեան փողոց,
ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
կայանալու է
ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
հետեւեալ ծրագրով.
1) Մանկական երթ դրօշակներով, լապտերներով և ֆակելներով։
«ԳԱՐՈՒՆԸ ԳԱԼԻՍ Է»։
2) Շքեղ երթ ըէկլամների, Թիֆլիսի կարիկատուրիստների, երգիծաբանական նկարներ յատուր պատշաճի։ Լաւագոյն նկարների և սիւժէտների համար տրվում են պարգևներ։
3) Սինեմատօգրաֆ երեք բաժանմունքով։
4) Մանկական հրավառութիւն, պտի-շվօ, օդակների նետումն, ձուախաղ։
5) Պարեր, երաժշտութիւն—երկու խումբ։
Մուտքն արժէ՝ երեխաների և աշակերտների համար 20 կ., հասակաւորներին 30 կ.։
Մուտքի տոմսակները կարելի է գնել միմիայն Արտիստական Ընկ. այգում։
(հ.շ.կ.) առ. 365. 3—1

Գօլովինսկի պր. ՑԻՐԿ-ՍՊՕՐՏ Այսօր, ապրիլի 14-ին, 4-րդ օր ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԸՄԲՇԱՄԱՐՏԻ
ղեկավարութեամբ Ի. Վ. Լեբեդեվի
Առաջին ելք «Սև Մասկայի»—սիրված Լոնդոնի, Պարիզի, Բեռլինի, Պետերբուրգի և Մոսկվայի կողմից։
ԱՅՍՕՐ ԿԸՄԲՇԱՄԱՐՏԵՆ 4 ԶՈՅԳ։
Ընդարձակ ծրագիր ՍԻՆԷՄԱՏՕԳՐԱՖԻ։ Այս օրերս կը ժամանեն յայտնի ակրօբատներ, կլօուններ և ցիրկային այլ անձեր։ 364. 1—1

Սրտի, Թոքերի և ստամոքսի հիւանդութիւններից
ԹՈՒԼԱՑԱԾ ՕՐԳԱՆԻԶՄԻՆ
հրաշալի կերպով ամրապնդում է
ԲԱՈՒԷՐԻ ՍԱՆԱՏՕԳԷՆԸ
Բժշկական ձեռնարկը ձրի և ֆրանկօ ուղարկում է Ռուսաստանի միակ Ներկայացուցիչ Ֆարիան Կլինգսլեանդը՝ Վարշավայում։
[illegible] Նախազգուշացում.—Իսկականը միայն ԲԱՈՒԷՐԻ Սանատօգէնը կարմիր էտիկէտով իւրաքանչիւր արկղիկի վրա։
(B. 30388) առ. 355. 1—1

Коробка 25 коп.
Форманъ
противъ
Насморка

Ծախվում են անարժէք կեղծիքներ։
Իսկական ֆօրմանի իւրաքանչիւր արկղիկը պէտք է ունենայ հետևեալ ֆիրման. Դրէզդէնի Քիմիական Լաբօրատորիա Լինգնէրի, Դրէզդէնում։
(5,14) (M. 76035) 241. 2—2

ԱՅՍՕՐՎԱՅ ԺՈՂՈՎԸ

Այսօր, ապրիլի 14-ին, Թիֆլիսում տեղի կունենայ մի ժողով, որին հրաւիրված են մասնակցելու կովկասեան քաղաքների, Թիֆլիսի գիտնական ընկերութիւնների, մամուլի, ազնուականութեան և խոշոր առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւնների ներկայացուցիչները։

Ժողովի խորհրդակցութեան և քննութեան առարկան է կովկասեան համալսարանի իրագործութեան խնդիրը։

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, բարձր շրջաններում սկսել են համակրութեամբ վերաբերվել կովկասեան համալսարան բանալու առաջարկին։ Պետական Դուման ցանկալի է համարել, որ մշակվի և ներկայացվի օրէնագիծ այդ համալսարանի մասին։

Կան տեղեկութիւններ, որ Պետական Խորհրդի անդամներից շատերը ընդառաջ կը գնան կովկասեան համալսարանի հիմնադրութեան։ Մինիստրների խորհրդի անդամները՝ Ստոլիպին, Կասսո, Կոկովցեվ յայտնել են իրանց համակրութիւնը։

Խնդիրը բաւական առաջ է գնացել։

Այդ ճիշդ է։ Բայց նա դեռ դրական լուծում չէ ստացել։

Եւ ահա այժմ կարեւոր է հոգացողութիւն, որ այդ հասունացած խնդիրը չը դանդաղի և կանգ չառնի իր իրագործութեան ճանապարհին։

Պէտք է բոլոր անհրաժեշտ միջոցները գործ դնել ապահովելու և արագացնելու խնդրի դրական լուծումը։

Այդ տեսակէտով մի որոշ դեր ունի կատարելու և այսօրվայ ժողովը։

Եւ ահա ինչպէս։

Կովկասեան համալսարանի հիմնադրութեան և բացման խնդիրը կապված է դրամական միջոցների քանակի հետ։ Որքան շատ լինեն ժողովված գումարները համալսարանի թէ միանուագ և թէ տարեկան պահանջվող ծախքերը ծածկելու համար, այնքան աւելի արագ և հեշտ լուծում կը ստանայ համալսարան բանալու խնդիրը։

Կառավարութեան շրջաններում արդէն հաշտվել են այն մտքի հետ, որ կովկասեան համալսարանը պէտք է բացվի ընդհանուր հիմքերի վրա և նրա նիւթական ապահովութեան մի մասը պէտք է վերցնի իր վրա պետական գանձարանը։ Բայց, անկասկած, նոյն այդ շրջանները չեն ցանկանում, որ գանձարանի վրա ընկնող մասը լինի չափազանց զգալի և խոշոր։ Եւ կարող է պատահել, որ սպասվող ծախքերի մեծութիւնը դարձեալ արգելք հանդիսանայ համալսարանի բացմանը մի քանի տարի ժամանակով։

Եւ ահա այսօրվայ ժողովում, որին հրաւիրված են մասնակցելու թէ այն անձերը, որոնք արդէն արել են նուիրատւութիւններ համալսարանի օգտին, և թէ նրանք, որոնք կարող են աջակցել նոր նուիրատւութիւնների գանձմանը իրանց յորդորներով, գործակցութեամբ և անմիջական մասնակցութեամբ,—այդ ժողովում պէտք է մի քայլ առաջ տարվի կարեւոր գործը և հնարաւորութիւն տրվի, որ Թիֆլիս քաղաքի կողմից Պետերբուրգ գնացող լիազօրը կարող լինի նպաստաւոր զեկուցում ներկայացնել այն պաշտօնական յանձնաժողովին, որը պէտք է մայիս ամսին քննի կովկասեան համալսարանի հիմնադրութեան խնդիրը և նախապատրաստի հիմունքներ յատուկ օրէնագիծ մշակելու և օրէնսդրական մարմիններին ներկայացնելու համար։

Այսօրվայ ժողովը պէտք է զգայ իր վրա ծանրացող պարտականութիւնը և աւելացնի մեր յոյսերը կովկասեան համալսարանի մօտալուտ բացման համար։

Թող գեղեցիկ նպատակի գաղափարը համակի բոլոր ժողովականներին՝ անելու հնարաւոր ջանքեր՝ ապահովելու համար վաղուց սպասվող բարձրագոյն կրթարանի հիմնադրութիւնը մեր երկրում։

Ա. Քալանթար

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Յանուն մինիստրների խորհրդի նախագահ, ներքին գործերի մինիստր, Պետական Խորհրդի անդամ ՍՏԱՏՍ-ՍԿՐԵՏԱՐ ՀՕՖՄԷՅՍՏԵՐ ՍՏՕԼԻՊԻՆԻ

Պեօտր Արկադիեվիչ.

Ձեր բազմաջան գործունէութիւնը բարձր կառավարութեան ասպարիզում, ներշնչված անձնուէր հոգատարութեամբ մեր Թանգագին հայրենիքի օգտի համար, արժանացաւ Իմ կատարեալ համակրանքին։ Դեռ վերջերս մի հրովարտակով յանուն ձեր այս տարվայ փետրվարի 19-ին Ես ընդգծեցի ձեր մատուցած մի շարք օգտակար ծառայութիւնները գիւղացիութեան։ Անկեղծօրէն գնահատելով պետական ձեր ծառայութիւնները, Ես շնորհում եմ ձեզ Մեծ Իշխան Ալէքսանդր-Նեվսկիի շքանշանը։

Մնամ անդաւաճան բարեացակամ

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով գրված է՝

«և ձեզ յարգող ՆԻԿՈԼԱՅ».

Ցարսկոէ-Սելօ, 10 ապրիլի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Մինսկէն.—Կառավարութեան կարգադրութեամբ օտարազգիների մուտքը պոլիտեխնիկում սահմանափակվեց։ Ռուսներին թոյլ է տրվում միայն ռուսական հասունութեան վկայականով կամ ռուսական պոլիտեխնիկումներն այցելած լինելու վկայագրերով։ Ռուսներ կընդունվեն նոյնքան թւով, որքան դուրս կը գան դպրոցից ռուսներ։

Բելգրադ.—Այստեղ ուժեղ ագիտացիա է մղվում Թագաւորի Բուդապեշտ գնալու դէմ։

Բիզերտա.—Սպանական «Կատալոնա» յածանաւը հեռագրով պատուէր ստացաւ գնալ դէպի Մարոկկոյի ափերը։

12 ապրիլի

Պետերբուրգ.—Հանդիսաւորապէս բացվեց օդագնացութեան առաջին համառուսական համագումարը բարձրաստիճան պաշտօնական անձանց և զանազան հաստատութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ։ Ուղարկվեց ամենահպատակ հեռագիր Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի միջոցով։ Նախագահ ընտրվեց Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ժուկովսկին։ Կարդացվեցին բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։ Մասնակցում են 500 մարդ։ Համագումարին կից բացված է ցուցահանդէս։

Հռոմ.—Եկաւ ֆրանսիական զինուորական յատուկ միսսիա՝ Ֆալիէրի սեփական ձեռքով գրված շնորհաւորական նամակով։

Կորֆու.—Եկաւ աւստրիական նաւատորմը։

Վիէննա.—Կայսրը ապրիլի 19-ին մեկնում է Բուդապեշտ։

(Լրագիրներից)

Վիէննա.—Աւստրիական լաւատեղեակ դիպլոմատիական շրջաններից «Р. Сл.»-ի թղթակիցը տեղեկացաւ, որ Պետերբուրգից տեղեկութիւն է ըստացվել, թէ իբր, նկատի առած Սազոնովի դրութեան լրջութիւնը, արտաքին գործերի մինիստր է նշանակվում Ն. Չարիկովը։

Բեռլին.—Կ. Պոլսում պաշտօնավարող Չարիկովին արտաքին գործերի մինիստր նշանակելու լուրը տեղումս առաջ բերեց ծածուկ դժգոհութիւն։ Ղեկավար շրջաններում Չարիկովին համարում են գերմանատեաց, Իզվոլսկիի քաղաքականութեանը հետևող։ Կարծում են, որ նրա օրօք ռուս-գերմանական համաձայնութիւնը, որ նոր է միայն սկսել կազմակերպվել, զրօյի կը հաւասարվի։

Վիեննա.—Կոմս Էրենտալի օրգան «Wiener Allg. Zeit.»-ը հաստատում է Սազոնովի հեռանալու տեղեկութիւնը։ Լրագրի թղթակիցը հաղորդում է, որ հրաժարականի պատճառը մինիստրի ծանր հիւանդութիւնն է, թէև բժիշկները հիւանդի դրութիւնը անյուսալի չեն համարում։ Հէնց որ առողջանայ, Սազոնովը կը ստանձնէ դեսպանի պաշտօն Բեռլինում։

Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ վաղաժամ ու անհիմն են համարում Չարիկովին արտաքին գործերի մինիստր նշանակելու մասին տարածված լուրերը։

Մինիստրութեան մէջ յայտնի է, որ բարձր շրջաններում սպասում են Ս. Սազոնովի առողջանալուն և յոյս ունեն, որ ոյժերը վերականգնելուց յետոյ Սազոնովը առաջվայ նման կը ղեկավարէ արտաքին գործերի մինիստրութիւնը։ Սազոնովի հեռացման հարցը, ևս առաւել նրա յաջորդի հարցը, բնաւ չէ յարուցվել։ Սազոնովի քաղաքականութիւնը և ծրագիրը նախկինի նման վայելում է լիակատար վստահութիւն։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Պեկին.—Հիւանդութեան պատճառով պաշտօնից հրաժարված Սիլեանի փոխարէն մանջուրական գեն.-նահանգապետ նշանակվեց Սիչուանի գեն.-նահանգապետ Չժաօ Էրսիւնը, որին պաշտօնական օրգանը համարում է աչքի ընկնող վարչագէտ։

Չինական լրագրների տեղեկութիւնների համաձայն, Իլիյի զինւորական նահանգապետը ստացել է կառավարութիւնից մի միլիօն լան՝ փոխառութիւնները ծածկելու և 2 միլիօն՝ զինւորական կարիքների համար։

11 ապրիլի

Տօկիօ.—Մանջուրիայի գեներալ-նահանգապետի պաշտօնում եապոնացի Չժաօ Էրսիւնին նշանակելը անհանգստութիւն է յարուցանում։ Մամուլը դրա մէջ տեսնում է Պեկինի կառավարութեան անբարեացակամ մի գործողութիւն, վախենում է բարդութիւններից։

Գիրին. — Նահանգի հասարակական հաստատութիւնների միութեան կոմիտէտը որոշեց դիմել կառավարութեանը մի զեկուցագրով, թէ անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռք առնել ռուսական և եապոնական ազդեցութիւնները Մանջուրիայում խափանելու համար, որպէսզի նա չանջատվի Չինաստանից։

Մուկդէն.—Կոնֆերէնցիայի ընդհանուր նիստերն աւարտվելու առիթով Ալֆրէդ Շէն պատգամաւորներին պատւեց ճաշով։

12 ապրիլի

Պեկին.—Պաշտօնական օրգանը, յենվելով իր թղթակցի տեղեկութիւնների վրա, վկայում է, որ իրերի դրութիւնը Կորէայում արագ բարելավվել է, եապոնացիները Հարաւային Մանջուրիայում գործում են եռանդով, եապոնացիները փութանակի գաղթեցնում են կորէացիներին չինական սահմանակից շրջանը։ Թերթը բողոքում է Լեաօդունը եապոնացիների ձեռքում դարձեալ կապալով շարունակելու դէմ, որովհետև դա սպառնում է Հարաւային Մանջուրիայի անկախութեանը, կը փակէ չինական մաքսատներին, կը քայքայէ եւրոպական և ամերիկական առևտուրը Մանջուրիայում։ Լրագրի կարծիքով, մեծ պետութիւնները պէտք է տարբերութիւն դնեն Մանջուրիայի և Կորէայի միջև։

ՄԱՐՕԿԿՕՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Մադրիդ.—Ցէուտից հեռագրում են, որ մի տեղացի վկայում է, թէ ապստամբները Ֆէզն առան և սրի անցրին զօրքին. սուլթանը փախաւ ֆրանսիական հիւպատոսարանը։

11 ապրիլի

Փարիզ.—Մինիստրների խորհուրդը որոշեց նոր օժանդակ գնդեր ուղարկել Կազաբլանկ՝ եւրոպական գաղութներին հնարաւոր վտանգից պաշտպանելու համար։

Բեռլին.—Ընդհանուր առմամբ գերմանական մամուլը և պաշտօնական շրջանները զուսպ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի մարօկկեան հարցը։ Համագերմանական մամուլը պահանջում է կտրուկ միջոցներ և բաժանել Մարօկկօն Ֆրանսիայի և Գերմանիայի միջև։

Կազաբլանկ.—Գեներալ Մուանիէն հրաման ստացաւ յայտնել հարևան ցեղերին, որ Ֆրանսիան աշխարհակալութիւններ չէ կամենում, այլ սոսկ աջակցում է սուլթանի զօրքին՝ օտարազգի հիւպատոսներին օգնելու և կարգ ու կանոնը սուլթանի գերիշխանութեան տակ վերականգնելու համար։ Եթէ ցեղերը խաղաղվեն, ֆրանսիական զօրքերն էլ առաջ չեն գնայ. հակառակ դէպքում կարգ կը մտցնեն և խստագոյնս կը պատժեն ապստամբներին։

Ֆէզից հաղորդում են, որ ուլէջամա ցեղը ապր. 6-ին յարձակվեց քաղաքի վրա, բայց յետ մղվեց։ Եւրոպական հիւպատոսները որոշեցին առաջարկել եւրոպացիներին մեկնել քաղաքից, երբ դէպի Տանժեր տանող ճանապարհը կազատվի։ Չէմուռ ցեղը մտաւ Մէկկինէս, սուլթան հռչակեց Հաֆիդի եղբայր Մուլայ-Էլզինին, կողոպտեց ապրանքները, սպանեց մի քանի հրէայ վաճառականների։

Տանժեր.—Լուրեր տարածվեցին, որ «Ժուռնալի» աշխատակից Գուէլը ընկել է ապստամբների ձեռքը և ենթարկվել չարչարանքների։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Կ. Պոլիս.—Տուզ քաղաքի մօտերը ալբանացիները յարձակվել են թիւրքաց զօրամասի վրա և ստիպել են նրան յետ նահանջել։

«Մ. և Ա.» կուսակցութիւնը բաժանվեց երկու անկախ խմբերի։ Անջատված 53 պատգամաւորները կազմեցին լիբերալ փոքրամասնութիւն պարլամենտում։ Պառակտումը սպառնում է առաջ բերել քաղաքական լուրջ ճգնաժամ։ Հաւանական է ֆինանսների և արտաքին գործերի մինիստրների հրաժարականը։ Հնարաւոր է նոյնպէս, որ ամբողջ կաբինէտը հրաժարական տայ։ Քաղաքական կրքերը սաստիկ բորբոքված են։ Մայրաքաղաքի քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ պտտվում են վրդովեցուցիչ լուրեր՝ իբր մօտիկ ապագայում տեղի են ունենալու մռայլ դէպքեր։ Անգամ ղեկավար շրջաններին մօտ անձինք չեն թագցնում իրանց երկիւղը գալիք ահաւոր դէպքերի նկատմամբ։

Թաւրիզ.—Յորդ անձրևները խոշոր վնասներ պատճառեցին։ Քաղաքում և գիւղերում բաւականին թւով բնակիչներ զոհվեցին փլված տներից։

11 ապրիլի

Թաւրիզ.—Հացի ճգնաժամը սուր կերպարանք է ստանում։ Բաղդածները ծեծեցին յեղափոխական քարոզիչ Շէյխ Սելիմին։ Ազգաբնակութիւնը գայրացած է տեղական իշխանութիւնների, անջումանի և քաղաքային վարչութեան դէմ՝ իր ժամանակին շրջակայ գիւղերից ցորեն բերել չը տալուն համար։

«Թաւրիզ» թերթը փակվեց թիւրքերի քաղաքականութեան մասին գրելուն համար։

Ատրպատականի անջումանը գեներալ-նահանգապետի հետ բացէ ի բաց թշնամական դիրք են բռնել կառավարութեան դէմ։

Կ. Պոլիս. — Պալատի մեծամասնութեան ֆրակցիայի նիստում 107 ձայնով ընդդէմ 23-ի՝ Թալէաթ բէյի կողմնակիցները, որոնց թւումն էին նաև բոլոր մինիստրները, որոշվեց «Մ. և Ա.» ֆրակցիայի կոմիտէտի ծրագրի մէջ մտցնել նոր կէտեր, որոնց համաձայն արգելվում է առանց ֆրակցիայի $^2/_3$ մասի համաձայնութեան ստանձնել մինիստրական պորտֆէյլներ, ուժեղացվելու է սուլթանի իշխանութիւնը և խալիֆի պրէստիժը, պահպանվելու են շարիաթի սովորութիւնները, Երկու ամսվայ ընթացքում գումարվելու է կոնգրէս՝ նոր ծրագիրն ընդունելու համար։

Թալէաթ-բէյի կողմնակիցների օրգան «Թանին» այլադաւանների գործողութիւնների մէջ տեսնում է ռէակցիօն ինտրիգ։

Պատերազմական դրութեան պատճառով զինւորական դատարանը արգելեց լրագիրներին՝ փակելու սպառնալիքով խօսել երիտասարդ թիւրքերի պառակտման մասին։

Մայրաքաղաքում ոստիկանութիւնը փակեց բոլոր մասօնական միութիւնները։

Մինիստրների խորհուրդը, լուրերին նայած, վճռել է արտաքին գործերի մինիստրին անվստահութիւն յայտնելու դէպքում արձակել պալատը։

Կ. Պոլիս.—Ի նկատի ունենալով, որ երկրում «Մ. և Ա.» կոմիտէտի երկպառակութեան պատճառով կարող են խռովութիւններ ծագել, Մահմուդ Շէվքէթ փաշան խորհուրդ տուեց այլադաւաններին (գիւրդենտ) չափաւորել ոգևորութիւնը և չը պահանջել մինիստրների փոփոխութիւն, որպէսզի անմիջական ճգնաժամը վերանայ։

Ակիստար. — Տեղեկութիւններ են ստացվել, որ ալբանացիները ապրիլի 10-ին ջարդել են զօրքերին երկու կռիւների մէջ, որոնցից մէկի ժամանակ իբր ուժանակով յօդս են ցնդեցրել երկու բատալիօն։

Կ. Պոլիս.—Ալբանացիները ռումբերով յարձակվել են Վէյիօյէ բերդի վրա, բայց չորս ժամ կռւելուց յետոյ նահանջել են։ Բերդը խիստ վնասվել է։

Մէկկայի էմիրը 10,000 արաբներով անցաւ Ասորեստանի սահմանը Մահիր-Իդրիսի վրա յարձակվելու համար։

(Լրագիրներից)

Բեռլին.—Ալբանացիների պարագլուխները Բ. Դռանը ներկայացրին հետևեալ պահանջները. 1) Ալբանիայի աւտօնոմիա. 2) ալբաներէն մտցնել դպրոցներում և կառավարական հաստատութիւններում և նշանակել ալբանական վիլայէթներում ալբանացի նահանգապետներ. 3) նահանգների եկամուտները պէտք է գործադրվեն Ալբանիայի կարիքների համար. 4) ալբանացիները խաղաղ ժամանակ մնում են զինւորական ծառայութեան մէջ Ալբանիայում։

Ցետինիէ.—Արտաքին գործերի մինիստրը կտրականապէս հերքում է «Neue Fr. Presse»-ի բաց թողած այն տեղեկութիւնը, թէ իբր մեծ պետութիւնները, ի թիւս որոց և Ռուսաստանը, Ցետինիէում որոշ քայլեր են արել, որպէսզի Չերնոգօրիան չը միջամտէ Հիւսիսային Ալբանիայում կատարվող դէպքերին։ Չերնոգօրիան գիտակցելով իր միջազգային պարտականութիւնները՝ խիստ չէզոքութեան է հետամուտ, ոչ մի առիթ չը տալով մեծ պետութիւններին որևէ միջամտութիւն անել։

ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԴԷՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՀԱՓՈՐՁԸ

Թաւրիզ, 6 ապրիլի

Մայսուրեան-Զարիֆեան դրամատիկական խումբը ապրիլի 3-ին ներկայացրեց «Անյայտ կինը» 5 գործողութեամբ դրաման Բերդաթաղի Արամեան ուսումնարանի թատերասրահում։ Տիկ. Մայսուրեանի բենեֆիսն էր և թատերասրահը լիքն էր երկսեռ խուռն հանդիսականներով։ Խաղն անցաւ ակնկալվածից աւելի աջող։

Ներկայացման գիշերը մի խումբ համակրող երիտասարդների նախաձեռնութեամբ պատրաստված էր ընթրիք ի պատիւ Թաւրիզում հիւր եղող թատերական խմբի՝ Պատմագրեանցների տանը։ «Անյայտ կինը» պիէսայի 5-րդ գործողութիւնը վերջանալուց անմիջապէս յետոյ, երբ պատրաստվում էին յարգելի հիւրերին առաջնորդել թատերասրահին մօտիկ գտնվող խնճոյքի տեղը, երկսեռ հոծ բազմութեան ներկայութեամբ, սրահին կից Արամեան ուսումնարանի բակում սկսվեց երկրորդ և զզուելի դրաման։ 7—8 հայ բռնաւորներ, սօփաներով ու դաշոյնով զինված՝ մթնոր, յարձակվում են «Զանգ» շաբաթաթերթի երբեմն խմբագիր, այժմ խմբագրական ժողովի անդամ և Արամեան-Աննայեան ուսումնարանների տեսուչ Ալ. Տ.-Վարդանեանի վրա, սօփաների տակ ջարդում խեղճին՝ ծանր ու թեթև 3 վէրք բացելով գլխի վրա։ Տէր-Վարդանեանի մահն անխուսափելի կը լինէր, եթէ թատերասրահից դուրս եկող տղամարդկանց, կանանց և փոքրահասակների աղաղակը, խառնաշփոթ գոռում-գոչումը չը խանգարէին մտածված գործը։ Ներկայ եղող հանդիսականներից վրա են հասնում և ազատում անչէին սպանիչների ձեռքից։ Յարձակման ու քաշքշուկների ժամանակ անյայտացել են մահափորձին ենթակայ Տ.-Վարդանեանի բաճկոնի կէսը և ժամացոյցը։ Հերոսները մտածված չարիքը անկատար է գործ դնելուց յետոյ պուկ եկան։ Վրան գլուխը բզիկ-բզիկ դարձած, արիւնաթաթախ խմբագիր-աշխատակցին տարան մօտիկ Պատմագրեանցների տունը, ուր կանչվեց բժիշկ Սարգիսը, որ կապեց Տ.-Վարդանեանի վէրքերը և կատարեց անհրաժեշտ նախնական խնամքը։ Դրամատիկական խմբի պատւին տրված խնճոյքը տեղի ունեցաւ նոյն գիշեր. սակայն և այնպէս տխուր ու անտրամադիր տպաւորութեան ներքոյ՝ երկրորդ և զզուելի դրամայից յետոյ։ Դէպքի հետևեալ օրը Ղալա քաղաքամասի ոստիկանութիւնը քննութիւն կատարեց և յարձակում գործող հերոսներից երկուսին ձերբակալեց ու բանտարկեց, որոնք Թայֆայական լիգերների գործակատարներից են։ Թէ ինչ վախճան կունենայ այս բաշիբոզուկ գործողութիւնը, կը տեղեկագրեմ պարբերաբար։

Ինչու և ինչ պատճառով գործածեցին սօփաչիները իրանց սօփաները Ալ. Տէր-Վարդանեանի գլխի վրա։ Պատասխանը շատ պարզ է։ Ալ. Տ.-Վարդանեան, կամ «Զանգ» շաբաթաթերթը յաճախ ներկայացնում էին Թայֆայականների յայտնի արարքները հասարակութեան աչքին, իսկ վերջին օրերում «Զանգի» մէջ տպագրվեց Ղարադաղից մի թղթակցութիւն, որի մէջ վատ գոյներով էին հանդէս եկել հայ գործակալ զինւորների յոռի արարքները Ղարադաղի գիւղերում։ Դէպքի երեկոն սօփայով ու դաշոյնով էին բացատրութիւն պահանջում Տ.-Վարդանեանից։

Ի զուր են մամուլի քարոզները որոշ բռնաւորների մասին, որ խօսքին խօսքով պատասխանեն, մամուլին մամուլով։ Դրանց փէշակն է մամուլի դէմ սօփա և խօսքի դէմ գնդակ ու վառօդ ցոյց տալու վայրենաբարոյ սիստեմը։ Մենք այդ տեսանք Պոլսում, Կովկասում և այժմ տեսնում ենք Պարսկաստանում.

Հայկ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Երէկ, ապրիլի 13-ին, Թիֆլիսում բացվեց Մանկավարժական Թանգարանը։

Նրա հիմնադիրն է Կովկասեան ուսումնական շրջանի դիւանատունը։

Թանգարանը երկյարկանի մի շինութիւն է Կուր գետի ափին, երկրորդ արական գիմնազիայի մօտ։

Թանգարանը ունի շատ ուսանելի բովանդակութիւն։ Այնտեղ հանդէս են դրված մի կողմից այն բոլոր իրերը, քարտէզները, գործիքները և ուսումնական պարագաները, որոնք հարկաւոր են մանկավարժական նպատակների համար, միւս կողմից ցուցադրված են աշակերտների ձեռարուեստները և ձեռակերտները։

Բազմաթիւ ներկայ էին զանազան հիմնարկութիւնների, մանկավարժական աշխարհի և մամուլի ներկայացուցիչները։

Մաղթանքից յետոյ կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆ ասաց մի ճառ, որի մէջ բացատրեց, թէ ինչ միջոցներով է գլուխ բերված մանկավարժական մուզէյը։

Թանգարանը դեռ ևս լիակատար չէ, այնուամենայնիւ նա բաւական ճոխ է և թողնում է գոհացուցիչ տպաւորութիւն այցելուի վրա։

ՈՒԹՍՈՒՆ ՏԱՐՎԱՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Յայտնի հայ բանասէր Գաբրիէլ ա.-քահ. Պատկանեան իր մահից յետոյ թողել է մի ստուար աշխատութիւն, որ պարունակում է ութսուն տարւայ պատմութիւն, սկսեալ 1802 թւից մինչև 1882 թիւը։

Նա գրված է ինքնակենսագրութեան ձևով, բայց զուգահեռաբար խօսում է և այդ շրջանի ազգային բոլոր նշանաւոր դէպքերի և կեանքի մասին։

Ձեռագիրը, որ գրված է շատ մաքուր, մանրակրկիտ, ներկայումս գտնվում է երդուեալ-հաւատարմատար Յովհաննէս Սպենդիարեանի մօտ, որին յանձնել է հանգուցեալի որդին։

Այդ ձեռագիրը մաս-մաս կը տպվի «Աբօր» ամսագրի մէջ այս ապրիլ ամսից սկսած։

Ցանկալի էր, որ գտնվէր մի մեկենաս, որ հոգար ծախքը՝ առանձին գրքով հրատարակելու ազգային պատմութեան այդ նոր յիշատակագիրը։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՐԿԱՏՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԻ (ՄԵՇՉԱՆՆԵՐԻ) ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Համաձայն նահանգապետի առաջարկութեան, Թիֆլիսի հարկատու դասակարգի՝ մեշչանների աւագը, քաղաքիս ոստիկանական 12 քաղաքամասերում բնակված հարկատու հասարակութիւնից ընտրելու է լիազօրներ, այդ դասակարգին վերաբերեալ գործերը կառավարելու համար։

Այդ լիազօրները ընտրվում են թւով 100 հոգի, երեք տարի ժամանակով—այն է 1911—1913 թ.։ Ըստ որոշման անցեալ մարտ ամսվայ 7-ին կայացած մեշչանների ընդհանուր ժողովի, առաջիկայ ընտրութիւնները կատարվելու են (ինչպէս և մեշչանների աւագը յայտարարել է լրագիրներում) ամբողջ քաղաքի ոստիկանական 12 մասերը չորս ընտրողական շրջանի վերածած ու բաժանված հետևեալ կարգով ու թւերով.

I շրջան (1, 2, 3, ոստ. բաժ.) 18 լիազօր
II » (4, 5, 6, » ») 24 »
III » (7, 8, 9, » ») 32 »
IV » (10, 11, 12, » ») 22 »

Ընտրութիւնները տեղի են ունենալու մեշչանների վարչութեան բնակարանում (Ելիզավետինսկայա, № 23) առաւօտեան 10 ժամին հետևեալ օրերը.

I շրջանի ընտրողների համար ապրիլի 18-ին
II » » » » 24-ին
III » » » մայիսի 1-ին
IV » » » » 8-ին

Օրէնքով այս ընտրութեանը մասնակցելու իրաւունք չունեն՝ 1) նրանք, որոնք հասակով 25 տարեկանից պակաս են. 2) այն անձինք, որոնց իրաւունքը սահմանափակված է օրէնքի 582-րդ յօդուածի 15-րդ յաւելուածով. 3) 1899 թ. հրատարակված օրէնքի դրութեան մասին, բաժ IX օրէնսգրքի, և 4) բոլոր այն անձինք, որոնք մինչև այսօր չեն մտցված ընդհանուր ժողովագիր-ցուցակագրքի կամ մեշչանների վարչութեան ցուցակի մէջ ընդունված կարգով։ Բացի դրանից պէտք է իմանալ և այն, որ ամեն մէկը իրաւունք ունի միմիայն իր այժմեան բնակած տեղին համապատասխան շրջանային ժողովին ներկայանալու, և կարելոյն ոչ ուշ, քան ընտրութիւնն երկու օր առաջ, պէտք է ձեռք բ մուտքի տոմսակ, առանց որի ոչ ո թոյլատրվում մտնել ընտրութեան դահլ

Տոմսակները՝ մեշչանների վարչութիւ կարող են ստանալ ամենայն օր, ս ապրիլի 14-ից առաւօտեան ժամը 10 մինչև ցերեկվայ ժամը 2-ը, բացի կիր և տօնական օրերից։

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալն անհրաժեշտ ենք համարում յայտնել մեր հաւաքած տեղեկութիւններից երև է, որ այդ դասակարգը քաղաքիս բն չութիւնից աւելի քան 100,000 հոգ բաղկացած ստուար բազմութիւն է կայացնում։ Եւ ինչպէս յայտնի է, մեծ մասնութիւնը բաղկացած է չունևոր թշուառ բնակիչներից, որոնք, իրանց զարգացողութեան և անտարբերութ շնորհիւ, մշտապէս ընտրութիւններին մ նակցել են շատ սակաւ թւով։ Այդ պա ճառով, շատ անգամ (համարեա մեծ մա լիազօրներ են ընտրվել իրանց կոչմ բոլորովին անհամապատասխան անձ որոնք պատասխանատու պաշտօնների գլ անցնելով տեղիք են տուել հասարակ թեան մէջ ոչ թէ միայն տրտունջների առէ-կօւէների, այլ նաև յաճախ զանազ զեղծումների և հասարակական գումարնե վատնելուն։

Պէտք է ի նկատի առնել և այն հանգ մանքը, որ նորընտիր լիազօրներից բա կացած ժողովը, 3 տարվայ ընթացքո շատ կարևոր հարցեր քննելով ու վճռել ընտրելու է նաև մեշչանների աւագ, ն օգնական, Թիֆլիսի որբերի դատարանի հ մար երկու անդամներ իրանց փոխանոր ներով և այլ պատասխանատու պաշտօննե Ուստի ցանկալի էր, որ Թիֆլիսի այդ մե չան-հարկատու դասակարգը իր սրտ մօտ համարէր այդ հարցը, հետաքրքրվէր ոչ միայն մեծ թւով ներկայանար շր ջանային ժողովներին, այլ և այնպիսի ա տացաւ և արժանաւոր անձինք ընտր լիազօրներ, որոնք իսկապէս օգտակար հա դիսանային պատասխանատու պաշտօնն րում, ճշգութեամբ կատարելով իրանց վ դրած սրբազան պարտականութիւնները։

Մ. Զ.

ԱԶՕՎՕ-ԴՕՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ

Ապրիլի 5-ին Պետերբուրգում կայաց Ազովօ-Դոնեան Առևտրական Բանկի ակցի ներների ընդհանուր ժողովը, որին ներկ յացրել էին 12,269 ակցիաներ՝ 126 ձայն րի իրաւունքով։ Ակցիաների ամենամ թիւը ներկայացրել էր Ալ. Ի. Մանթաշե նը՝ 4 հազար ակցիաներ, ապա Կամենս 858, եղբարք Ժամհարեանները՝ 50, կօվսկին՝ 719, Գ. Առաֆելեանը՝ 203 այլք։

Ընդհանուր ժողովը միաձայն ընդունե վարչութեան զեկուցագիրը և հաշիւը։ Այ հաշիւը ցոյց էր տալիս, որ բանկի հիմն կան դրամագլուխը պէտք է աւելացնել, ո րովհետև բանկի գործունէութեան սաստ զարգացումը ամեն տեղ և մանաւանդ Թու քեստանի երկրում առաջ է բերել սաստ կարիք շրջանառական միջոցների մէջ։ Միայ անցեալ 1910 թ., հաշուեկշռային մնացորդ ների ընդհանուր գումարը աճել է աւել քան 66 միլիօն րուբլի, այսինքն մեծացել գրեթէ $50^0/_0$, նախորդ տարվայ համեմատ թեամբ։

Ընդհանուր ժողովը որոշեց աւելացնե բանկի դրամագլուխը դարձեալ 10 միլ նով, բաց թողնելով նոր ակցիաներ, ամեն մինը 487 ր. 50 կ. արժողութեամբ։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(Անսովոր յօբելեան)

> «Պղինձը վէր ընկաւ, չը կոտրվե
> Ամա՝ ձէնը վեր էլաւ»։
> Ժողովրդական ասացուած

1870 թւականից,—երբ ես աւարտեց Ներսիսեան դպրոցի ուսումը,—մինչև օր շարունակ կատարել եմ ուսուցչական պաշ տօն՝ Թիֆլիսում, Վերին-Ագուլիսում, Սի ֆերօպօլում, ներկայումս էլ Մօսկվայում։

Մասնակցել եմ այս ու այն ուսուցչի յ բելեանին։ Բայց երբէք առիթ չեմ ունեց լսելու որևէ ուսուցչուհու յօբելեանի մաս («Մշակ» № 62)։

Մինթէ, իրաւ, այնքան շատ առաջադիմե ցինք, որ հայ վարժուհին էլ թոյլ տալիս իրան՝ երազել այդպիսի փառաւոր հանդէս...

Այն էլ՝ ինչպիսի պայմաններում...

Ո՛չ թէ խոշոր կենտրոններում,

Այլ՝ գաւառում, այս կամ այն անկյուն գիւղում...

Հայ վարժուհու յօբելեանը՝ գիւղում...

Գիւղ՝ և յօբելեան...

Ինչ ուզում էք, ասացէք, բայց ես չեմ հաւատում։

Ես երևակայում եմ հայ գիւղն՝ իր կին յօբելեարով...

Սա խոժ ուղղակի ղարապլուխ է. վերա ծնութեան ղարապլուխ։

Ես չը գիտեմ թէ ինչպէս կը վերաբեր վէր իմ կարդացողն այս երևակայութեանը։

Ինչ ինձ է վերաբերում, կուզէի թե առ նել, թռչել. լինել այն ինչ գիւղական խրճի թի, ծխոտված պատերի, մրոտ ձեռքերի Զմրութ-նաների հետաքրքիր շրջանում...

Կուզէի տեսնել դրանց բուռն տենչը այն սրտատրոփ բոպէներին, երբ կը սկսէին դըր [illegible] կեանքի ու երջանկութեան ուղիներ [illegible] անող հայուհու վառ գծերն ու շար- [illegible] ձևերը…

Գիւղի վարժուհութիւն…

Դա խոս հալ ու մաշ անող՝ դժոխային աշխատանք է…

Արդէն միայն այն հանգամանքը, որ կինը… լաւ լսեցէք, կինը, մայրը… կարողացել է տոկալ այդ հոգեմաշ աշխատանքին ամբողջ քառորդ դար,—ըստ ինքեան բարձրաձայն է խօսում աշխատաւորի օգտին։

Բայց, չը գիտես՝ ինչու, գործի մէջ [illegible] է… սև կատու։

Օ՜հ, այդ չանդուռն կատուները՝ իրանց անտանելի մլաւոցով… օգտակար ու գեղեցիկ ամեն ձեռնարկութիւն՝ իր ծլի մէջ խեղդելու տենչով…

Գումարումն սառցվում է սև ու մութ մի օրհնեան՝ կատարված, ինչպէս վայել է տեղին՝ գերեզմանական լռութեամբ…

Առանց ներկայութեան գլխաւոր տարրերի…

Առանց մասնակցութեան գեղջուկ-գեղջուհիների, որոնց հետ, որոնց մէջ ու նրանց համար ապրել է, աշխատել ու տանջվել… կին յօբելեարների նահապետը։

Աւելը եկած է եղել՝ ցոյց տալու մեր գեղջկուհիներին ու գեղջուկներին՝ ի դէմս նրանց վարժուհու՝ կնոջ դերը տանը, դըպրոցում ու համայնքում և դրանով մի քիչ բարձրացնելու նրա նշանակութիւնը գիւղերում։

Սակայն, չը գիտես, ինչի՛ց դրդված՝ մեր լրագրական իրականութիւնը կարեոր է համարել խաչ դնել կին-կօլլեգիայի անցեալի վրա…

Ցամենայն դէպս, անհասկանալի է մնում թէ ինչու այդպիսի հեգնանքով է տօնվում աշխատաւոր տիկնոջ 25-ամեայ յօբելեանը…

Կնոջ, որի առջև մեր սրտի խունկը պէտք է ծխէինք։

Իմ ամենաջերմ համակրանքներս՝ տիկին Սաթենիկ Զաքարեանին։ Է. Ք. Ն.

ՄԱՔԱՌԵԼ ՊԵՏՔ Է

Մեր անփառունակ իրականութեան մէջ քիչ չեն այնպիսիները, որոնք բռնում են, եթէ կարելի է այսպէս արտայայտվել, գրելայաւով։

Երեկվայ մտաւորապէս տղոմիկ աշակերտը, որ քիչ թէ շատ տանելի շարադրութիւն գրելուն անգամ անընդունակ է, այսօր հրապարակ է իջնում շաբլօն դարձած բառերի հսկայական կոյտով (որ տարակոյս չը կայ՝ պլագիատ է) և ապլօմբով ճառում փիլիսոփայութիւնից, հասարակագիտութիւնից, յար և նման գիտական սիստեմների, այլ և սօցիալ-տնտեսական և քաղաքական բարդ ու կնճռոտ հարցերի նկատմամբ, որոնց վերաբերութեամբ նա կանոնաւոր գաղափար չունի։

Գրում են առանց հասկանալու, թէ ինչ և ում համար են գրում. գրում են, որպէսզի իրանց ազգանունները փայլեն այս կամ այն թերթի էջերում։

Եւ մեր թերթերը, աւաղ, բացառութեամբ, տեղ են տալիս ինքնակոչ գրականագէտների և հրապարակախօսների «յօդուածներին»։

Որոշ ժամանակից յետոյ այդպիսիները, մեր նայիվ հասարակութեան շնորհիւ, յորջորջվում են ժուռնալիստներ և, գիտէք, լուրջ ժուռնալիստներ։

Ցանկացէք յիշեցնել այդ պարոններին, որ իրանք իրաւունք չունեն կրելու այդպիսի յորջորջումներ, նրանք իսկոյն համդէս կը գան հրաշագեղ պաշտպանողական ճառով և աւելորդ անգամ կընդգծեն, որ իրանք բաւականաչափ գիտեն ղեկավարել հասարակական միտքը։

Այդպիսի մրոտումներով նրանք աւելի ու աւելի ընդոտնում են լրագրութեան, հրապարակախօսութեան «աւտօրիտէտը»։

Մեր լուրջ, իսկական հրապարակախօսների վրա պարտք է ծանրանում բուռն կերպով կռուել, մաքառել «գրական-ժօնգլեօրների» դէմ, հասկացնել ընթերցող հասարակութեանը, որ «կօշկակարի բանը չէ կարկանդակ թխելը»։ Յովհ. Գալստեան

ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾԵՆՔ

Օրդուբադ, 23 մարտի

Հանդամէջ հայաբնակ գիւղը առաջները թէև համարվում էր Օրդուբադ քաղաքի արուարձան, բայց կառավարվում էր իր առանձին տանուտէրով և պաշտօնապէս կցված էր Ն.-Ագուլիսի շինական հասարակութեանը։ Այս վերջին տարիներս միացել է այդ գիւղը Օրդուբադի հետ, դարձել է նրա մի թաղը (кварталъ) և կրում է քաղաքային ամեն մի ծանր ու թեթև հարկերը, տուրքերը. սակայն չունի իր ներկայացուցիչը, ձայնաւորը քաղաքային վարչութեան մէջ։

Հանդամէջում 25—30 տարի առաջ ապրում էր 32 տուն հայ ընտանիք, գրեթէ բոլորն էլ ունևոր. ունէր իր սեփական քահանան, իր երկսեռ ուսումնարանը՝ երբեմն աչքի ընկնող ուսուցիչներով, որոնց հռչակի շնորհիւ Վ.-Ագուլիսից հայ և Օրդուբադից թուրք աշակերտներ էին գալիս սովորելու. գիւղի բաղդը շուռ եկաւ, ընտանեկան կենցաղի պահանջը բարդացաւ. հետևելով առուեցոց՝ հանդամէջցոց մէջ էլ գաղթելու ցաւը զարգացաւ, ու այժմ՝ հասնելով իր գագաթնակէտին՝ մնացել է գիւղում 4—5 տուն, 3—4 պաշտպանող, (2-ը անդամալոյծ) և 8—9 պառաւ ու ջահել կանայք։ Բարեկարգ այգիներն ու չէն, հոյակապ տները յանձնվելով այդ պառաւ կանանց կամ տականդ ապամարդկանց խնամքին, դարձել են աւերակ ու խոպան. երբեմն ամառները 1—2 ընտանիք գալիս են հայրենիք, կեանքը երկու ամսաչափ եռալ է սկսում, բայց սեպտեմբերից այդ կեանքն խամրում ու նախկին մեռեալ շրջանակի մէջ է մտնում։

Հանդամէջը այժմս պաշտօնապէս կապված է Օրդուբադի հետ, հետևաբար և բարոյապէս էլ կապված պիտի լինի այնտեղում ապրող հայերի հետ, ու կազմելու է նրա հետ մի ընտանիք. այդ երկու թաղերի հայերը պարտական են ամեն կերպ համերաշխ գործելու. երկու թաղերին էլ երկու տարուց աւելի է, որ հովւում է մի քահանայ. այսուհետև այս երկու թաղերում իմ ու քոնը հարցեր տեղի պիտի չունենան. Հանդամէջից և Օրդուբադից դուրս հարուստներն էլ պիտի ըմբռնեն այս համերաշխական հարցը և այսպիսի հասարակական գործերի վերաբերմամբ իրար վրա հաշտ աչքով պիտի նային։

Օրդուբադում բացվել է ծխ. ուսումնարան. ամենքս գիտենք, որ օրդուբադցին միջոց չունի միայն իր ուժով նրա յարատևութիւնը պահպանելու։ Հանդամէջցի հարուստների սեպուհ պարտականութիւնն է նպաստել այդ հաստատութեանը։

Անապատի Ս. Ստեփաննոսը վերանորոգվում է, որ նրա արդիւնքը (որքան էլ չընչին լինի) դառնայ Օրդուբադի ուսումնարանի ապրուստ, իսկ Թուրքաբնակ Գանձակ գիւղում Ս. Յովհաննէս չէն ուխտատեղին (լաւ հսկող որ լինի, տարէնը կարող է տալ 150—200 ր.) ինչու չը յատկացվի Օրդուբադի ուսումնարանին. մինչև այժմ այդ եկամուտից օգտվել են ինքնակոչ կառավարիչներ և տեղի քահանաները։

Հանդամէջցի Աւետիսեանները և Սուլխանեանները միայն կարող են մի-մի ուսումնարան պահել. իսկ օրդուբադցի Նազարբէգեանները, Մելիք-Ալլահվերդեանները, Տէր-Պետրոսեանները և էլի շատ ուրիշները լսել են, չեն պատասխանում Օրդուբադի հոգաբարձուի կոչին, առարկելով թէ իրանք այնտեղ չեն ապրում, իրանց որդիքը այնտեղ չեն սովորելու և էլի սրանց նման խօսքեր։

Ուսումնարանի շինութեան առաջին քարը դրեց հանդամէջցի Կ. Աւետեանը. տալով 100 ր., նա դրանով ցոյց տուեց, որ համերաշխ գործելու սուրբ գաղափարին երկրպագու է։

Համերաշխ գործելու սկզբունքը արծարծող և գլուխ բերելու համար աշխատող պիտի լինեն տեղական բանիմաց մարդիկ, ուսուցիչները և մանաւանդ քահանաները, բայց ցաւալի է, որ ինչպէս շատ տեղ, այս երկու թաղերումն էլ ընդհակառակն ենք տեսնում. ըստ մեծի մասին դրանց նշանաբանն է «բաժանեա զի տիրեսցես»։

Գ. Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Պետերբ. Հեռ. Գործակալութիւնը հաղորդում է, որ՝ ուղղափառ դաւանութեան վարչութեան վերաբերմամբ ցոյց տուած գերազանց ծառայութեան համար՝ ստատսդամա կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնա Վօրօնցօվա-Դաշկօվային շնորհված են գոհարազարդ պատկերներ Աննայի ժապաւէնի վրա՝ նրա ունեցած կրծքի ոսկէ շքանշանի համար։

◆ Զատկի օրը, Թիֆլիսի թեմի առաջնորդի պաշտօնակատար Եփրեմ եպիսկ. Սուքիասեան այցելեց Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվին, Փոխարքայի զինուորական և քաղաքացիական մասի օգնականներ գեներալ Շատիլօվին և սենատոր Վարացիին, Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսին, գեն.-նահանգապետին, քաղաքացիական նահանգապետի պաշտօնակատարին, Փոխարքայի դիւանապետ հօֆմէյստէր Պետերսօնին և կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդօլֆին։ Սրբազանին փոխ-այցելութիւն տուեցին գեներալ Շատիլօվը, Վրաստանի էկզարխը, նահանգապետի պաշտօնակատարը, Ռուդօլֆը, ոստիկանապետ գնդապետ Զաւիցկինը և Թիֆլիսի 1-ին տղայոց գիմնազիայի վերատեսուչը։

◆ Վերադարձան Պետերբուրգից Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վարացին, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան և բժշկա-սանիտարական տեսուչ Կար. Ստեփանեան։

◆ Ինչպէս տեղեկացնում է քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, Թիֆլիսում բարձր կրթական հաստատութիւն հիմնելուն սկզբունքով կողմնակից է նաև ֆինանսների մինիստր Կօկօվցէվը, սակայն վերջինիս կարծիքով ժողովված գումարները քիչ են։

◆ Առաջիկայ տարի Կովկաս են գալու գիտական նպատակներով մի խումբ պրօֆէսօրներ։

◆ Ապրիլի 7-ին կայացաւ Թիֆլիսի նահանգական ատեանի նիստը, ուր Պետական Դումայի անդամ Կարլ Չխէիձէի գործի վերաբերութեամբ ընդունվեց, որ Չխէիձէն Դումայի անդամ է ընտրվել անկանոն ցենզով, և որոշվեց հանել Չխէիձէի անունը ընտրողական ցուցակներից։

◆ Հաւատի աղբիւրից տեղեկացնում են, որ Ալէքս. Մանթաշեանի դրութիւնը ծանր է։ Որդիները հօր ցանկութեամբ մեկնեցին Պետերբուրգ։

◆ Այս օրերս Մեսեխի բանտից մի խումբ բանտարկեալներ, որոնք մեղադրվում են «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով, ուղարկվեցին աքսոր։

◆ Այս օրերս Մօսկվայի համալսարանում բժշկական ֆակուլտէտից պրօվիզօրի աստիճան ստացաւ հայուհիներից առաջին կինը՝ շուշեցի տիկին Սեմիրամիդա Մովսէսբէկեան Սաղիեանցը։

◆ «Աղբիւր-Տարազի» խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեան այսօր մեկնում է Հռոմ, մամուլի կօնգրէսին մասնակցելու։ Նազարեանը գնալու է նաև Լօնդօն՝ անգլիական թագաւորի թագադրութեան և Շէքսպիրեան հանդէսներին ներկայ լինելու։

◆ Համաձայն Հեռագրական Գործակալութեան տեղեկութեան, յուլիս ամսում Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտին կից, Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձուի նախագահութեամբ, կազմակերպվում են բնագիտութեան և ֆիզիկայի դասընթացքներ Կովկասի ժողովրդական ուսուցիչների համար յատուկ հրաւիրված մասնագէտների ղեկավարութեամբ։ Դասընթացքը լինելու է վեց շաբաթական. ցուցակագրվողների թիւը մեծ է։

◆ Մեզ խնդրում են տպել, որ Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութիւնը ստացաւ նուէր Սարգիս Սողոմոնեան Յարութիւնեանից, ի յիշատակ իր եղբօր՝ Աստուր Ս. Յարութիւնեանի, 20 ր., որի համար յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ ուսուցիչ Միսակ Ասլեանի յօբելեանը յետաձգվում է շաբաթ օրվան, ապրիլի 16-ին, ց. ժամը 11-ին, և կը կայանայ Ներսիսեան դպրոցում։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Զատկական տօների առիթով խորհուրդը ստացել է հետևեալ նուիրատուութիւնները. յօգուտ աղքատաց՝ առևտրական տուն եղբ. Բաղդասարեաններից՝ 50 ր., ինժեներ Գարեգին Գերասիմօվիչ Հալաճեանից՝ 10 ր., Գրիգոր Չիրուխչեանից՝ 4 ր. և Արկադի Միլովից՝ 3 ր.։ Յօգուտ աշակերտական ձրի և էժանագին ճաշարանի՝ օրիորդ Վարվառէ Նազարբէկեանից՝ 1 պուդ 2 ֆունտ շվէյցարական պանիր, օր. օր. Սօֆիա և Նինա Շահնազարեաններից՝ 6 ր.։ Ստացել է Աշոտ քահանայ Թէյմուրազեանի միջոցով հանգուցեալ Գալուստ Յարութիւնեանի ժառանգներից ի յիշատակ իրանց հօր մեռելահացի փոխարէն՝ աղքատներին բաժանելու համար՝ 50 րուբլի»։

◆ Երէկվանից Թիֆլիսում սկսվեցին ձիարշաւները, որոնց առիթով իբրև մրցանակ տալու յատկացված է 9,000 րուբլի։

◆ Ապրիլի 17-ից Թիֆլիսում սկսվում են մէշչանների ընկերութեան 100 լիազօրների ընտրութիւնները առաջիկայ եռամեակի համար։

◆ «Кавказъ»-ը հաղորդում է, որ Փոխարքայի հրամանով բացվում են ժամանակաւոր զինուորական դատարաններ Քութայիսում, Բաթումում, Բագւում, Գանձակում, Երևանում և Կարսում։

◆ Երեքշաբթի, ապրիլի 13-ին, յօգուտ Հայոց Որբախնամ Ընկերութեան կազմակերպված զբօսանքը գրաւել էր մեծ բազմութիւն։ Զբօսանքը կայացաւ Արտիստական Ընկերութեան ամառային շինութեան մէջ։ Եղանակը լաւ լինելով, ժամը 8-ին երեկոյեան արդէն այգին լի էր հասարակութեամբ և մանաւանդ երեխաներով։ Զինուորական երաժշտութիւնը, մալօռուսական խումբը իր պարերով, իր՝ Ընկերութեան որբանոցի սաների երգեցողութիւնը, մի շարք ուրիշ զուարճալիքներ և ամերիկեան բազարը—այդ ամենը նպաստեցին զբօսանքի աջողութեան։ Թէ հասարակութիւնը գոհ սըրտով հեռացաւ և թէ Ընկերութիւնը ունեցաւ բաւական մեծ հասոյթ։

◆ Ապրիլի 17-ին Ժողովրդական Տանը, ցեր. ժամը 12½-ին, Ա. Գվալաձէն ռուսերէն կը կարդայ դասախօսութիւն «Վրաստանի միջազգային դրութիւնը հինաւուրց ժամանակներում և Թամարա թագուհուց յետոյ»։ Երեկոյեան նոյն տեղում հայկական ներկայացում է։

◆ Իշխանութեան կարգադրութեամբ փակվեց Թիֆլիսում հրատարակվող վրաց «Ախալի Ազրի» օրաթերթը։

◆ Ապրիլի 7-ին Բագւում հեղեղ պատահեց, որ մի քանի տեղերում տուեց թեթև վնասներ։

◆ Բագուից մեզ հաղորդում են. «Ամսիս 2-ին և 3-ին հասարակական ժողովարանի դահլիճում տեղի ունեցաւ ցուցահանդէս՝ սովորական և ծաղկազարդի բազարը, յօգուտ Կուլտ. Միութեան կանանց արհեստագիտական դպրոցի։ Ցուցահանված էին աշակերտուհիների ձեռագործներ, նուրբ գործուածքներ, սպիտակեղէններ և առհասարակ այնպիսի իրեր ու հագուստներ, որոնք կարվում և գործվում են յիշեալ դպրոցում։ Թէ ձեռագործները, թէ արուեստի վերաբերեալ գործուածքները և սպիտակեղէնները, որոնք, պէտք է ասած, բաւական նուրբ և գեղեցիկ էին պատրաստված, վաճառվում էին մատչելի գներով, նոյնիսկ մօդայի խանութներում ընդունված գներից պակաս, այնպէս որ համարեա թէ մեծ մասով վաճառվեցին։ Ըստ երևոյթին՝ գոյացած արդիւնքը գոհացուցիչ էր և դպրոցի վարչութիւնը իր ջանքերը պսակված պէտք է համարէր։ Աշակերտուհիների թիւն է 100՝ բոլորը 16 տարեկանից վեր հայուհիներ, որոնք զանազան դասարաններում կար ու ձևից, ձեռագործից, զուլպայագործութիւնից զատ՝ սովորում են նաև կրօն, հայոց և ռուսաց լեզուներ, մաթեմատիկա և այլ առարկաներ։ Դպրոցը 4 տարվայ գոյութիւն ունի»։

◆ Այսօրվանից Գանձակում բացվում է թռչնապահութեան ցուցահանդէս 3 օրով։

◆ Սուխումում ընդարձակ չափով տարածված է բծաւոր տիֆը, որով վարակվել են նոյնիսկ մի քանի բժիշկներ։

◆ Ապրիլի 2-ին Դարաչիչագի ս. Կարապետ վանքի վանահայր Բառնաբաս վարդապետ Տէր-Մխիթարեանը անձնասպան եղաւ կախելով իրան։ Հանգուցեալը վերջին տարիները տառապում էր ուղեղի բորբոքմամբ և բոլորովին կարված ապրում էր աշխարհից և Էջմիածնից մոռացութեան տրված։ Հանգուցեալի մնացած կօպէկները, մօտ 2,900 րուբլի,—թէև խնդրում է մի նամակով Երևանի Նահանգապետից՝ ուղարկել իր եղբօրը,—դառնալու են Էջմիածնի սեփականութիւն։

◆ Շնող գիւղից մեզ գրում են. «Անցեալ օրը Յ. Շահնազարեանի 8 տարեկան որդին գիւղից կայարան գնալիս «Շնողնաջուրն» անցնելու մտքով մտնում է անձրևներից յորդացած գետը և հոսանքին չը դիմանալով զոհվում նրա ալիքներին, որի դիակը մինչև օրս էլ չէ գտնված, թէև ամեն օր էլ որոնում են գիւղացիները։ «Շընողնաջուրը» խառնվում է Դեբետ գետին, որի մէջ էլ անհետացած է դիակը»։

◆ «Մշակի» խմբագրութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր հաստատութիւններին և անձերին, որոնք հեռագիրներով և նամակներով շնորհաւորեցին խմբագրութեան անդամներին և աշխատակիցներին զատկական տօները։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական թատրոնում

Առաջին ներկայացումը հետաքրքրական էր և գրաւել էր մեծ բազմութիւն։

Խաղացվեց Հաուպտմանի «Էլգա» դրաման 3 գործողութեամբ և 7 պատկերով։ Բայց ամբողջ պիէսը ներկայացվեց մի անգամից, առանց միջարարների, և տևեց մօտ մէկ ժամ։

Դա, որքան յիշում ենք, առաջին դէպքն է Թիֆլիսում, որ պիէսը կատարվում է առանց միջարարների։

Էլգան վերցված է լեհական անցեալից և կրում է ռօմանտիկ ասպետական բնաւորութիւն։ Դրամայի հերոսուհին մարդու է գնացել կոմս Ստարժենսկիին, բայց սիրում է երիտասարդ Օգինսկիին։ Եւ այդ հանգոյցի վրա հիւսված է պիէսի մակարդակը։

Կոմսի դերը կատարող Պավլենկովը և Էլգայի դերը կատարող Վօլոխօվան գոհացրին հանդիսականներին։ Վօլոխօվան ունի հաճելի ձայն, զգացված խաղ և խօսակցութիւն։

Էլգայից յետոյ խաղացվեց «Կրեչինսկիի հարսանիքը» յայտնի պիէսը։ Հանդիսականները ծափահարութեամբ ողջունեցին Պուտեատային (Կրեչինսկիի դերում), իբրև անցեալ տարվայ իրանց ծանօթին։ Բնորոշ և տպաւորիչ խաղացին Կրուչինին (Մուրոմսկիի դերը) և Ուսպենսկի (Ռասպլիւևի դերում)։ Վատ չէր Սլավեանսկայա (Լիդոչկայի դերում)։

Երեքշաբթի, ապրիլի 12-ին, խումբը խաղաց «Հենրիխ Նաւարացին» պիէսան, որի մէջ գլխաւոր հերոսի՝ Հենրիխի դերը կատարեց դերասան Պուտեատան ամենամեծ աջողութեամբ։ Երէկ երեկոյեան խումբը ներկայացրեց «Մասօններ» պիէսան, որի մասին կը խօսենք վաղը։ Վ.—Ն

Եկեղեցական երգեցողութիւն

«Պատարագի քառաձայն արարողութիւնը», որ անմահացրեց իր հեղինակի՝ Մակար Եկմալեանի անունը, հանգուցեալ երաժշտագէտի մահից յետոյ դարձել է իսկապէս մի տեսակ քաւութեան նոխազ։ Տեղից վեր կացողը իրան խմբապետ յորջորջելով գեղեցիկ գործը նահատակում է անխղճօրէն։ Դեռ լաւ է, որ այդպիսիներից մի քանիսը ղեկավարում են մի կերպ քառաձայն պատարագը հարազատութեամբ, և այդպիսի դէպքերում երաժշտութիւնը, չը նայած խմբի և խմբապետի խոշոր պակասաւորութեան, թողնում է այնուամենայնիւ իր համեմատական տպաւորութիւնը լսողների վրա։ Բայց, ցաւ ի սիրտ պիտի ասել, որ կան այնպիսի ինքնակոչներ էլ, որոնք յանդգնում են մօտենալ սուրբ գործին, «նպատակայարմար» դասելով իրանց կողմից ինչ որ փոփոխութիւններ մտցնել Եկմալեանի քառաձայնի մէջ և այդպիսով միմիայն արդար գայրոյթի հետ նմանեցնել տան իրանց Կրիլօվի «Էշն ու Սոխակը» առածին…

Դժբաղդաբար չը կայ մեզանում գոնէ մի ձեռնհաս անձն, որ երաժշտական բարձր կրթութեամբ յաջորդ հանդիսանայ՝ գոնէ նմանողութեամբ՝ Եկմալեանին և շարունակէ նրա ստեղծած մեծ գործը նրա շկօլայով։

Մենք լսեցինք շաբաթ, ճրագալոյցին Կուսանաց վանքում երգող այն օրիորդաց քառաձայն խումբը, որ պատրաստել է Յովնանեան դպրոցի երգեցողութեան ուսուցիչ Տէր-Յովսէփեան նոյն դպրոցի աշակերտուհիներից։

Իսկապէս Թիֆլիսում սա առաջին փորձն է, որ պատրաստվում է իգական խառն խումբ, ըստ որում տենօրի պարտիան երգում էին իգական ցածր ձայնով, իսկ բասերին փոխարինում էին contralto-ները։

Լսեցինք նոր խմբի երգածը և գոհ չը մնացինք։

Խմբապետը հէնց սկզբից վերցրեց սխալ տոն, չը կարողանալով իջեցնել բարձրացած եղանակը և այդպիսով օրիորդների անմշակ ձայները հասան սպառման և յոգնածութեան։ Երկրորդ ձայնը խեղդվեց, իսկ սօպրանօները իրանց ճչոցով նսեմացնում էին միւսներին։

Սակայն, իբրև նորութիւն, մենք յոյս ունենք վերացված տեսնել բոլոր դեֆեկտները մօտիկ ապագայում, մանաւանդ որ խմբապետին օգնութեան կարող է հասնել դպրոցի տեսուչ Ստ. Մալխասեան, որ բաւականին ծանօթ է Եկմալեանի ներդաշնակած պատարագի ոգուն և կատարման։

Նոյն օրը Վանքի աւ. եկեղեցում երգում էր Ներսիսեան դպրոցի խումբը։ Լսողներն ինձ պատմեցին, որ եկեղեցում յատկապէս քառաձայն պատարագի համար՝ ներկայ էին նաև մի քանի օտարազգիներ։ Սակայն խումբը ցոյց է տուել իր կատարեալ անանկութիւնը և անվերջ սխալներով, աններդաշնակ երգով թողել է աննպաստ տպաւորութիւն։ Ես.

Վրաց Թատրոն

Ապրիլի 12-ին, Վրաց Թատրոնում, վրաց դերասանական խումբը խաղաց վրացի երիտասարդ գրող Գիօրգի Փօցխօվելիի «Կեանքի շուրջը» նոր դրաման, 4 գործողութեամբ։

Պիէսի մէջ պատկերացրված է Գօլա անունով մէկը, որը կեանքի մէջ անչափ զրկանքներ, հալածանքներ կրելուց ընկնում է յուսահատութեան մէջ և անձնատուր է լինում վատ կեանքի, թէև վերջում նրանում խօսում է վաղուց թաղված ինքնաճանաչութիւնը և խոստովանվում է իր արարքների անվայելչութիւնը։ Կնոջ դաւաճանութեան պատճառով բաժանվելով նրանից, նա սիրահարվում է Թամարա անունով մի երիտասարդ աղջկայ վրա և ուրախանում է անչափ, որ նրա հոգեկան տանջանքները այս անգամ գէթ վերջ կը գտնեն, ու նրա սրտի մէջ գոյացած բացը կը գոցվի։

Բայց աւաղ. երկար չէ տեւում նրա այդ ուրախութիւնը, որովհետև Թամարան, լինելով չքաւոր ծնողների զաւակ, որոշում է ամուսնանալ մի հարուստ անձնաւորութեան հետ, չը նայած որ սիրում է Գօլային, որպէսզի ամուսնու փողերով կարողանայ խնամել իր ծնողներին և քոյրերին, որպիսի հանգամանքը վերջնականապէս տապալում է Գօլայի իղձը՝ «ապրել երջանիկ կեանքով սիրած կնոջ գրկում»։

Չը նայած պիէսի մէջ շօշափված հարցերի այժմէականութեան և հեղինակի հարուստ ֆանտազիային, ներկայ դրաման բեմականութեան կողմից բաւականին թոյլ է և թողնում է առաւելապէս առանձին տեսարանների, պատկերների, քան ամբողջացած պիէսի տպաւորութիւն, ուստի և կարօտ է բարեփոխութեան և վերամշակման։

Պէտք է նկատել նաև, որ պիէսի մէջ կան մի քանի տիպեր, որոնց դէմքերը, նշանակութիւնն ու տիպը մութ է մնում տեսնողի համար, մանաւանդ որ նրանցից շատերը ոչ մի գործողութիւն չեն կատարում, այլ լուռ ու մունջ նստած լսում են մի քանիսիների խօսակցութիւնները և մօնօլօգները։

Գործողութիւնների մէջ կան աջողված, հարուստ, էֆֆէկտաւոր տեսարաններ, թէև նրանցից ոմանք անտեղի են դրված և եթէ դուրս գցվեն բարեփոխութեան ժամանակ, ոչինչ չի կորցնի պիէսի ամբողջութիւնը։

Խորհուրդ կը տայինք յարգելի հեղինակին, առաջնորդվելով կօմպէտէնտ անձանց ցուցումներով, բարեփոխել այս դրաման, որով վրաց թատրոնի րեպէրտուարը կունենայ ժամանակակից հրատապ հարցերից ամենաէականները շօշափող մի նոր պիէս։

Խաղը լաւ անցաւ։

Թատրոնում բաւականաչափ հասարակութիւն կար, որը դուրս էր կանչում ծափահարութեամբ հեղինակին, բայց նա զինուորական էտիկէտի համար անյարմար համարելով բեմ դուրս գալ՝ մերժեց հասարակութեան ցանկութիւնը։ Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, 21 մարտի

«Մշակ» լրագրի № 39-ում Բաթումից պ. Մարի գրած մի թղթակցութիւնը, հանգուցեալ Գրիգոր Դանիէլեանի սպանութեան առիթով, առիթ է տալիս ինձ հրապարակ գալու և մամուլի միջոցով յայտնելու ի գիտութիւն բոլոր ընթերցողներին այն պարագաներն ու պայմանները, որոնք առիթ տուին մի անգամ արդէն դատաստանական իշխանութեան կողմից փակված գործի վերաքննութեանը, և որոնցով մի քանի մարդիկ, որպէս թէ դրդված մարդասիրական զգացմունքներից, արդարութիւնը երևան հանելու ու իսկական յանցագործին դատապարտված տեսնելու տենչից, բազմատարագիր բողոքագրով նորից քննութիւն են պահանջել։ Պ. Մարը ինձ՝ հանգուցեալ Գրիգոր Դանիէլեանի ամուսնուս համարելով իսկական ոճրագործն ու հեղինակը այդ խնդրի՝ յոյս է յայտնում, թէ անմեղ արդար արիւնը չի կորչի, և ոճրագործութիւնը երևան կը գայ անպայման։ Մի ցանկութիւն, որին ամենայն անձկութեամբ սպասում եմ և ես և ցանկանում անպայման կերպով գիտենալ իսկական ոճրագործին ու դէպքի իսկական ատառը: Բայց նախ քան այդ՝ ես ներկայիս, որպէս մի կարծեցեալ մեղադրեալ, թէև ոչ դատաստանական իշխանութիւնից, այլ պ. Մարից ու իր համախոհներից, ինձ իրաւունք եմ համարում հրապարակելու այն բոլոր դրդիչ պատճառները, որոնց շնորհիւ մի շարք մարդիկ, լարվելով ինձ դէմ, այդպիսի մի սուտ ու շինծու զրպարտութեամբ ուզեցին վրէժխնդիր լինել ինձանից, իրանց շահատենչ ախորժակները չը գոհացնելու համար:

Իմ ամուսնու սպանութիւնից մի առ ժամանակ վերջ, երբ ես անկարող եղայ ինչ-ինչ պատճառներով վարել նրա գործերը, որոշեցի կապալով տալ մի ուրիշի. մի պարոնի հետ արդէն վերջնականապէս պայմանաւորվել էի ես, երբ ինձ մօտ եկաւ պ. Յովսէփ Միքայէլեանը և խնդրեց յանձնել իրան: Բաւական խորհելուց վերջը գիջելով պարոնի քանիցս դիմումներին՝ որոշ պայմաններով ընկերացրի նրան ինձ հետ. մի քանի ամիս անց՝ երբ ես նկատեցի, որ պ. Յով. Միքայէլեանը բոլոր իրաւունքներս խլելով իմ ձեռքից կամենում է գործը սեփականեցնել ու ինձ դուրս ձգել, ես ստիպված եղայ օրինական ճանապարհով մաքրել մեր հաշիւներն ու զրկել նրան գործից: Այդ արդէն ինքն ըստ ինքեան մի առիթ եղաւ պարոնին՝ թշնամանալու ինձ. ահա դրանից վերջն էր, որ ծնունդ առան վերջերս այստեղ պտտվող շշուկները իմ մասին, որոնց ես սկզբում երբէք էլ կարևորութիւն չէի տալիս: Սակայն Յովսէփ Միքայէլեանը նոյն միջոցներում մէկ օրվայ ընթացքում երկու անգամ յարձակվեց ինձ վրա մեր բուֆէտում ու անվայել, լկտի հայհոյանքներով պահանջեց գոհացնել իրան դրամական միջոցներով, սպառնալով՝ հակառակ պարագային՝ յայտնութիւններ երևան հանելու, նոր քննութիւն նշանակելու ամուսնուս սպանութեան առիթով ու ինձ Սիբիր ուղարկելու: Ահա այդ ժամանակ ինձ համար պարզվեց բոլորը. և ահա այդ ժամանակ ես միայն կարողացայ հասկանալ, թէ ինչի՛ արդիւնք են եղել այն բոլոր ասէկօսէները, որոնք պտտվում էին իմ շուրջը: Բացարձակապէս մերժում ստանալով՝ Միքայէլեանը, իր շուրջը հաւաքելով ինձանից դժգոհ տարրերին, սկսեց ներելի ու աններելի միջոցներով նախ ինձ դէմ գրգռել հասարակական կարծիքը և ապա դէս ու դէն ընկած՝ սրճարաններում, գինետներում և հասարակական այլ վայրերում համախմբված մարդկանցից ստորագրութիւններ հաւաքել, առանց սակայն նախօրօք յայտնելու թէ՝ ինչի՞ համար են ստորագրել տալիս: Ստորագրողները, որոնք ճիշդ որ ստորագրել են առանց ազգի ու կրօնի խտրութեան, մեծ մասամբ անգրագէտներ են ու այդ խնդրի նկատմամբ ոչ մի տեղեկութիւն չունեցող անհատներ, և որոնցից շատերն էլ դեռ մինչև օրս չը գիտեն, թէ ինչ թղթի տակ են ստորագրել իրանք:

Ես համոզված եմ, որ դատավարութիւնը, անաչառ դատավարութիւնը անպայման բաց կանէ գործի իսկական գոյնը, կը գտնի իսկական ոճրագործին ու այդպիսով մի անգամ ընդ միշտ վերջ կը դնի այդ խնդրին:

Պարոններ, եթէ իսկապէս դուք այնքան նախանձախնդիր էիք արդարութեան, ճշմարտութեան, եթէ դուք ունէիք ձեր ձեռքում ինձ մեղադրելու ոչ զօրաւոր, այլ ամենաթոյլ փաստեր ու կասկածներ անգամ, հետաքրքրական է ինչո՞ւ՝ առաջին դատավարութեան ժամանակ հրապարակ չեկաք ձեր այդ փաստերով յանուն արդարութեան ու չը պարզեցիք դատարանին այդ բոլորը: Ինչո՞ւ դուք այն ժամանակ ամեն կերպ աշխատում էիք սիրաշահել ինձ՝ ձեր ծառայութիւնն էիք առաջարկում, խրախուսում էիք չը վախենալ դատարանից և ինչո՞ւ յանկարծ ձեր նախաձեռնութեամբ նոր բողոք, նոր քննութիւն: Դա մի պերճախօս ապացոյց չէ՞ արդեօք ձեր ունեցած ակընկալութիւններին: Ես համոզված եմ, որ եթէ ձեր իւրաքանչիւրի պահանջը գէթ փոքր մասամբ կատարած լինէի իր ժամանակին, այժմ գործը այսպիսի ընթացք չէր ստանայ, և ճշմարտութիւնը՝ եթէ նա ծածկված էր մնացել մինչև այժմ՝ դարձեալ կը մնար ծածկված ու ամենքն էլ ի զուր անհամբեր չէին սպասի արդարութիւնը տեսնելու:

Արաքսիա Դանիէլեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ալբանացիների սուրը աջուձախ կտրում է: Թիւրքաց զօրքերը վերջին ճակատամարտերում տուին մի քանի հարիւր սպանված և վիրաւորված:

◆ Սալօնիկից հեռագրում են, որ մի կատաղի կռւում ալբանացիներից կոտորվեցին մօտ 200 մարդ:

◆ Րիչչիոտի Գարիբալդին Իտալիայից շարունակ ոգևորեցուցիչ լուրեր է ուղարկում ապստամբ ալբանացիներին:

◆ Ցետինիէից հեռագրում են, որ յատուկ նշանակված մասնաժողովը երևան հանեց, որ չէրնօգօրցիները բոլորովին անմեղսակից են ալբանական ապստամբութեան:

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ ժեօն Թիւրքերի երկպառակութիւնները հարթվեցին: Դժգոհներին բաւարարութիւն տրվեց: Ջաւիդ փաշան կը մնայ իր պաշտօնում,

◆ «Մ. և Ա.» կուսակցութեան նոր ծրագրի մէջ տեսնվում է ռէակցիօն ոգի:

◆ Թիւրքաց հրամանատար Տուրգութ փաշան մտադիր է յայտարարել պատերազմական դրութիւն: Նրա պատրաստութիւնների մէջ տեսնում են մտադրութիւն՝ միանգամից վերջ տալ ալբանական ապստամբութեան:

◆ Սօֆիայում շուտով կը գումարվի ալբանական համագումար բոլոր շրջանների ներկայացուցիչների մասնակցութեամբ:

◆ Պարիզում բանակցութիւններ են վարվում 3 միլիօն թիւրքական ֆունտի փոխառութիւն կնքելու մասին՝ մասնաւորապէս կովկասեան սահմանագլխին զօրանոցներ կառուցանելու համար:

◆ Կ. Պօլսից հաղորդում են, որ Ֆէրդինանդ թագաւորը ձգտում է համաձայնութիւն կապել Աւստրիայի հետ և մերձենալ եռապետեան դաշնակցութեան:

◆ Իտալական լրագիրները, ի նկատի ունենալով երիտասարդ թիւրքերի մէջ սկսված երկպառակութիւնը, գուշակում են նոր արիւնահեղ դէպքեր:

◆ Պարսից ֆինանսների մինիստրին սպանող ռուսահպատակները բերվեցին Բաքու:

◆ Պէկինում կազմակերպվեցին մի քանի ընկերութիւններ զինւորական գործը զարգացնելու նպատակով: Անդամների մէջ հանգանակութիւն է սկսվել նաւատորմի համար:

◆ Չինաստանը այս օրերս Ցիցիկար ուղարկեց մեծ քանակութեամբ ռազմամթերքներ: Չինացիները գնում են ձիեր և խմբերով ուղարկում են Ցիցիկար:

◆ Սիչուան, Իւննան և Կուանգսի նահանգների իշխանութիւնները հաղորդում են նոր ապստամբութեան մասին: Ապստամբները միացել են հայրենիքը անգլիացիներից պաշտպանելու դէվիզով:

◆ Ամերիկական նաւատորմը մայիսի 31-ի և յունիսի 6-ի միջև այցելելու է Լիբաւա:

◆ Բանւորական կօնֆերէնցիան Անգլիայում մի բանաձև ընդունեց, թէ պատերազմի դէմ կարելի է կռւել միակ զէնքով՝ ընդհանուր գործադուլով:

◆ Տուրինում ձերբակալվեցին մի քանի կասկածելի անձեր, որոնց թղթերից երևաց, որ նրանք մտադիր են եղել մահափորձ կատարել միապետների կեանքի դէմ, որոնք ներկայ են լինելու ցուցահանդէսի բացմանը:

◆ Բերլինից հեռագրում են, որ Զարիկօվը նշանակվել է ռուսաց արտաքին գործերի մինիստր:

◆ Ֆրանսիական կառավարութիւնը կարգադրեց ուժեղացնել զօրաբանակները Ալժիր-Մարօկկեան սահմանագլխին:

◆ Ֆրանսիական կառավարութիւնը մեծ պետութիւններից համաձայնութիւն է խնդրում ի նկատի ունենալով Մարօկկօյում տիրող սպառնական դրութիւնը, գրաւել իր զօրքերով Ֆէցը և Մարօկկօյի ուրիշ մի քանի ռազմակէտեր:

◆ Աւստրիական կղերական մամուլը խիստ դէմ է Զարիկօվին արտաքին գործերի մինիստր նշանակելուն: Ազդեցիկ «Vaterland»-ը ուղղակի ասում է, որ դա կը սպառնայ խաղաղութեան:

◆ Վատիկանը տրամադիր է Զարիկօվին արտաքին գործերի մինիստր նշանակելու մէջ տեսնել Ռուսաստանի և Վատիկանի յարաբերութիւնների բարելաւումն:

◆ Ապրիլի 5-ի գիշերը Պետերբուրգում տեղի ունեցան մի քանի ձերբակալութիւններ, որոնց ժամանակ կալանաւորվեցին 17 մարդ, որոնց մօտ գտնվեցին յեղափոխական գրութիւններ:

◆ Արդարադատութեան մինիստրը Պետական Դումային մի նախագիծ ներկայացրեց կրթական հաստատութիւններում դասադուլի համար պատիժներ որոշելու մասին:

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը Մօսկվայի համալսարանում Մանուիլօվի փոխարէն պրօֆէսօր կարգեց Կազանի պրօֆէսօր Զալէսկին, որ պատկանում է ռուս ժողովրդի միութեանը:

◆ Սխալ երևաց այն տեղեկութիւնը, որ պրօֆ. Կարէեվը դուրս եկաւ «Р. Богатство» թերթի խմբագրական կազմից:

◆ Հակառակ տարածված յամառ լուրերի, աջակողմեանների լիդէր և Պ. Խորհրդի անդամ Դուրնովօն չի մեկնի արտասահման և կը մնայ Պետերբուրգում:

◆ Սօցիալ-դեմօկրատները Պ. Դումային նախագիծ ներկայացրին գործադուլների ազատութեան մասին և հարցապնդում առաջադրեցին գործադուլի համար բանւորութեանը հալածելու մասին:

◆ Խօսում են, որ Պետական Խորհրդի նախագահ Մ. Ակիմօվը հեռանում է իր պաշտօնից և իբր նրա տեղ նշանակվելու է Խորհրդի անդամ ստատս-սեկրետար Ա. Երմօլօվը:

◆ «Нов. Вр.»-ն յայտնում է, որ Պետական Խորհրդի անդամ ստ.-սեկր. Պ. Դուրնովօն մեկնեց իր կալուածքը՝ Օրլօվի նահանգը:

◆ Ֆօմինի շաբաթում Մօսկվայում տեղի կունենայ Մօսկվայի նահանգի կօօպերատիվ ընկերութիւնների ներկայացուցիչների համագումարը՝ մօտ 200 հոգու ներկայութեամբ:

◆ Ռօստօվում Դ./վ. մամուլը յամառ կերպով պահանջում է երևան հանել այն ծերունի բժշկի ազգանունը, որ ընդունելութեան ժամանակ համբուրել էր մի գեղեցիկ գիմնազիստկայի: Բժիշկն իր մեղքը քաւելու համար 600 ր. նուիրեց յօգուտ գիմնազիայի աղքատ աշակերտուհիների:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

11 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ֆինանսների մինիստրը Բարձրագոյն թոյլտուութեամբ երէկ կարճ ժամանակով հեռացաւ Պետերբուրգից, պահելով գործերի ընդհանուր ղեկավարութիւնը իր ձեռքում:

ԿԻՍԼՕՎՕԴՍԿ: Առևտրի մինիստրը տեղում մնալուց յետոյ մեկնեց Ռօստով:

ՊԵԿԻՆ: Կայսերական հրովարտակով յայտարարվում է, որ Մանջուրիայում ժանտախտը վերջացել է:

12 ապրիլի

ԱԽԷՆ: Երկու դիմափոխված կողոպտիչներ ատրճանակներով կողոպտեցին Բրէյնիգի պօստային բաժանմունքը, յափշտակելով 4000 մարկ:

ԱԹԷՆՔ: Եկան անգլիացի մի ծովակալ և երկու բարձրաստիճան օֆիցէրներ՝ յունական նաւատորմը վերակազմելու համար:

ԼՎՕՎ: Կօզօվում ծագեցին հակա-հրէական անկարգութիւններ: Կանչվեցին զօրքեր: 29 դրդիչներին կալանաւորելուց յետոյ կարգուկանոնը վերականգնվեց:

ԵԱԼՏԱ: Սէզօնը բացվեց: Եկողների թիւը շատ մեծ է:

ՕԴԵՍՍԱ: Երկաթուղային ոստիկանութեանը հաղորդեցին, որ պօստային պաշտօնեայ Կօմրատսկին փախել է յափշտակելով 18,860 ռուբլի:

ՀՌՕՄ: Եկաւ և հանդիսաւորութեամբ ընդունվեց շվէդական թագաւորական զոյգը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՁԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՁԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱԻՆՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—38

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր (առաւօտ. ժ. 9—12
(երեկոյեան ժ. 5—7
(Ե. Հ. Կ.) 1254. 100—56

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 564. 100—99

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է կաշուի տակ սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն, դնում է բանկաներ: Բժշկութիւն տղամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ եռազախտի, հիմնաւոր բժշկութիւն տրիպէրի (սուսունակ), ցոյց է տալով հմուտ մասնագէտ բժիշկների: Օտարերկրեայ հիւանդներին մանրամասն խորհուրդներ և դեղեր գրաւոր կերպով: (Ուղարկել 3 րուբլի): Մասսաժ, էլեքտրականութիւն, բժշկական մարմնամարզութիւն: Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր: Ծախվում է իր կազմած «Տղամ. եւ կանանց գաղտնի հիւանդ. բժշկարան» նկարներով և րէցէպտներով: Գինը 50 կօպ., ճանապարհածախս՝ 15 կ.: Հասցէն. Тифлисъ, Семеновская ул. № 9.
(Կ. Հ.) 160. 50—14

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում:
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—85

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բկի,
հիւանդութիւններ,
Ընդունե- (առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վելեամինօվսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին:
(օ. մ.) 1227. 100—70

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակութիւն Գ. Գալստեանի № 60.
ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԵԱՆ
ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
I հատոր.
1) «Սէրը հանելուկ է»:
2) «Վէրօչկի գաղտնիքը»:
3) «Ինչպէս թողին նրանք ծխելը»:
4) «Առաջարկութիւն»:
5) «Էս էլ քեզ 200,000»:
5) «Կանանց ցանցառութիւն»:
Գինն է պօստի ծախքով 1 րուբլի:
Դիմել՝ Книж. магазинъ «Гуттенбергъ».
Լոյս տեսաւ 1911 թ. ԳՐԱՑՈՒՑԱԿԸ. ցանկացողներին ուղարկվում է ՁՐԻ:
(Կ.) 336. 2—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՏՆԵՐ Գօլօվինսկի պր. վրա, Գրիբօեդօվսկայա, Միխայլօվսկայա, Նիկօլայեվսկայա, Դիդուբէյսկայա և այլ փողոցների վրա:
ԽԱՆՈՒԹՆԵՐ տօնավաճառում (եարմարկա) և Մեռեխսկի նրբափողոցում:
ՀԻՒՐԱՆՈՑ Արսաթումանում, սեփ. գետնի վրա:
Բոլոր շինութիւնները քարաշէն են և եկամուտ են բերում: Դիմել «Օրիանտ» հիւրանոցը № 11, առ. ժ. 9—12-ը:
(օ.մ.) 309. 9—6

ԲՈՐՍԱ
Ամեն տեսակ յանձնարարութիւններ՝ բորսայում գնելու տոկոսաբեր և դիվիդենտային արժեթղթեր, նոյնպէս և բանկային ամեն տեսակ գործողութիւններ գաւառական կլիենտների համար կատարում է շուտափոյթ և բարեխիղճ կերպով
ԶԱԽԱՐԻՅ ԺԴԱՆՕՎ և Ընկ.
Բանկային Տունը
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Նեվսկի պր., 45.
Պատասխանները առաջին պօստով: Բոլոր գործողութիւնների պրօսպէկտը ըստ պահանջման ուղարկվում է ՁՐԻ.
(14) (П. 24881) 104. 2—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
„ԳԱՐՈՒՆ"
գրական-գեղարուեստական ալմանախ
Բ. գիրք
Բովանդակութիւն
Շիրվանզադէ—«Արմենուհի», Աւ. Իս
հակեան—1) «Անգիր և անյայտ», 2) «Հ
կտող քամին», 3) «Գիշերը պատեց»,
«Անյաղթ խալիֆան», Փայլակ—«Թովմ
Արսէն-Երկաթ—«Ձեմ կլնար», Յ. Քեչ
ճեան—«Ինչեկի լիճը», Ս. Բաբեան—
րակն այս գիշեր, Ռ. Անոփեան—«Berceu
Զիֆթէ-Սարաֆ—«Սպեղանին», Յ. Յա
բեան—«Աշխատանքի երգը», Դ. Դեմ
չեան—«Գիշեր է», Մ. Մանուէլեան—
քիաթ», Հ. Նազարեան—«Սև երգեր»,
Սեւակ—«Ինչպէս երբեմն», Մ. Պարո
մեան—«Ոսկիին ծարաւը», Ա. Ծիզրան
—1) «Նորից մի կարօտ», 2) «Հոգիս
յլեց», Հ. Մազմանեան—«Տրամութ
խոհերից», Մ. Մանուէլեան—«Աշնան
դիկը», Ալ. Ծատուրեան—1) «Գեղեցկ
թեան երգերից», 2) «Սիրավէպ», 3) «
ցիր, ալ աղջիկ», 4) Երազն է կանչում,
Միքայէլեան—«Վարդանանց պատերազմ
Վ. Տէրեան—1) «Հատուած», 2) «Ռ
հէքիաթ» գրքից, Կ. Միքայէլեան—«Ան
ջին վիշտ»:
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ:
Վերադիր վճարով՝ 1 ր. 25 կ.—Ա. և
գրքերը միասին՝ 2 ր. 25 կ.:
Դիմել բոլոր գրավաճառներին կամ МОСК
ВА, Б. Дмитровка, 9, кв. 50. Г. Микаэлян
(Հ.շ.ե.) 339. 5—2

Լոյս տեսաւ
ԳԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
Նկարներով: Տղամարդի և կնոջ ծածուկ հիւանդութի
ները, վարակվելուց ազատ մնալու կանոնները և
Բազմաթիւ խորհուրդներ եւ րէցէպտներ: Անհրա
ժեշտ գիրք բոլոր չափահասների համար, մանաւա
գաւառներում, որտեղ չը կան մասնագէտ բժիշկն
Գինն է 50 կօպ.: Ճանապարհածախսով 65 կօպ.: Կա
մեց մեդիցին. ֆէլդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆ: Ծախվում է Թի
լիսում «Կենտրոնական» և «Գուտտենբերգ» գրախ
նութներում և հեղինակի մօտ: Նաև ծախվում է «Տ
ռունակ և նրա բժշկութիւնը», նկարներով, խորհուրդ
ներով և րէցէպտներով: Գինը 20 կօպ., ճանապարհ
ծախս 15 կ.: Պահանջի մեծութեան պատճառով պա
րեկ կամ նալօժով չէ ուղարկվում: Առաջուց ուղ
կել պօստի մարկաներ: Հասցէն՝ Թիֆլիս, Семенов
№ 9. Գումարով պահանջողները զեղչի մասին թող գր
առանձին:

5 ՌՈՒԲԼԻ ԱՄԵՆ ՕՐ, և աւելի, հեշտու
թեամբ կարող են վաստակել տղամարդիկ
կանայք՝ ընդունելով պատուէրներ շատ սպա
վող մի առարկայի համար: Դրամագլուխ և գի
տութիւն չէ պահանջվում: Պայմանները, հ
[illegible] և ամբողջ նիւթեղէնները կուղարկվ
հէնց որ կը ստացվի 21 կօպ. մարկաներով՝ ճանապա
հածախսի համար: Հասցէն՝ О-ву «СЕМИ-ЭМАЛЬ»
г. Лодзь, № 39.
(В. 22423) 211. 10—10

Լոյս տեսաւ
ՈՍԿԷ ՍԱՆԴՈՒԽՔ
Նովէլլա Ֆեօդոր Սօլօգուբի
Թարգմանութեամբ [illegible] Գենջեանի
Գինը 8 կօպ.:
325. 3—3

ՄՆԱՅՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ
Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. XXX-ամեակի
«ՏԱՐԱԶԻ» մի փայլուն ալմանախ՝ նուիրված Կովկասի Հայոց Բարեգոր
Ընկ., նրա XXX-ամեակի առիթով, լոյս կը տեսնի մայիսի վերջին: Կը բովա
դակէ ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ իր բոլոր ճիւղերով պատ
կերազարդ էութիւնը:
Այս հանդէսը մի ազգագրական-տեղագրական է՝ լինելու պճնազարդված Ըն
շուրջ XXX տարվայ ընթացքում գործիչների պատկերներով:
Բոլոր ճիւղերը Կենտրոնի հետ շաղկապված կը լինեն դիւթական լարերով:
Հսկայական այս գործի մի մասը կատարվում է արտասահմանում: Բա
մարովանդակ յօդուածները հիւսվում են մեր առաջնակարգ, գործին և պատ
մութեան լաւատեղեակ պերճ գրիչներով ու կընծայաբերվեն հայութեան՝ յօ
լեանի օրը:
Բաժանորդագինը 2 ր., մինչև մայիսի մէկը Կովկ. Հայոց Բարեգործ. Ըն
բոլոր անդամների համար (թէ Թիֆլիսի և թէ ճիւղերի) 1 ր. 50 կ.: Մայի
մէկից յետոյ անխտիր ամենքի համար հատը 3 ր.:
Փղոսկրեայ թղթի վրա (սահմանափակ օրինակներ) հատը 25 ր.:
Վերադիր վճարով և պատուէրներ առանց բաժանորդավճարի չեն կատարվու
Դիմել՝ Тифлисъ, Редакція «ТАРАЗЪ».
(Ե.Հ.Շ.) 30. 20—3

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՇՉԱՆՆԵՐԻ ԱՒԱԳԸ

համաձայն Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեան, սրանով տեղեկացնում
Թիֆլիս քաղաքի մէշչանների հասարակութեան, որ 1) լիազօրների (դէպուտատների
ընտրութիւնները 1911—1913 թ. թ. համար, թւով 100 հոգի, լիազօրների ընդհանու
ժողովի այս տարվայ մարտի 7-ին կայացրած և նահանգական իշխանութիւնից հաստատ
ված որոշման զօրութեամբ, ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԵՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՎ, այն է՝ ԱՌԱՋԻՆ շրջա
(րայօն) մէջ մտնելու են I, II և III ոստիկանական մասերը, ԵՐԿՐՈՐԴ շրջանի մէջ—
IV, V և VI ոստիկ. մասերը, ԵՐՐՈՐԴ շրջանի մէջ—VII, VIII և IX ոստիկ. մասերը,
ՉՈՐՐՈՐԴ շրջանի մէջ—X, XI և XII ոստիկ. մասերը: Ընդ. ամեն ընտրվող 100 լիազօր
ների թիւը դասաւորված է հետևեալ կերպով. I շրջանում ընտրվում են 18 լիազօրներ
II-ում—28 լիազօրներ, III-ում—32 լիազօրներ և IV-ում—22 լիազօրներ: 2) ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԵՆ Մէշչանների Աւագի նախագահութեամբ, ԱՄԵՆ ՄԻ ՇՐՋԱՆ Ա
ՌԱՆՁԻՆ, Մէշչանների Վարչութեան շէնքի մէջ (Ելիզավէտինսկայա փող. № 23)
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10-ին, հետևեալ օրերում.

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ համար (1, 2 և 3 ոստիկ. մաս.—18 լիազօր) ապրիլի 17-ին:
ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ համար (4, 5 և 6 մաս.—28 լիազօր) ապրիլի 24-ին:
ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ համար (7, 8 և 9 մաս.—32 լիազօր) մայիսի 1-ին:
ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ համար (10, 11 և 12 մաս.—22 լիազօր) մայիսի 8-ին:

Հաղորդելով այդ մասին՝ Մէշչանների Աւագը հրաւիրում է Թիֆլիսի մէշչաններին,
որոնք ձայնի իրաւունք ունեն յիշեալ ընտրութիւններին մասնակցելու, ԻՐԱՆՑ ԱՅԺՄԵԱ
ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ, որի համար և Ա
ՂՈՐՈՎ խնդրում է, որ, ըստ կարելւոյն, ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ 2 ՕՐ ԱՌԱՋ
ձեռք բերել մուտքի տոմսակ, առանց որի ոչ ոքի չէ թոյլատրվի մտնել ընտրութեան
դահլիճը:

ՄՈՒՏՔԻ ՅԻՇԵԱԼ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ կը տրվեն ՄԷՇՉԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԱՄԵ
ՕՐ, սկսած ապրիլի 14-ից առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը, բաց
ԿԻՐԱԿԻ և ՏՕՆ ՕՐԵՐԻՑ:

Ընդ. սմին մէշչաններին նախազգուշացվում է, որ ընտրութիւններին, ըստ օրէն
մասնակցել չեն կարող՝ ա) 25 տարեկանից պակաս տարիք ունեցողները, բ) այն անձեր
որոնց իրաւունքները սահմանափակվում են Օրէնսգրքի IX հատ. 582-րդ յօդ. 15-րդ
ևելուածով, հրատարակ. 1899 թ., և գ) այն անձերը, որոնք մինչև այժմ չեն մուծված կ
մերանի ցուցակագրքի կամ Մէշչանների Վարչութեան ցուցակի մէջ՝ ընդունված կարգ
(ա. օ.) 341. 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.